ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2014 թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N275-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Սյունիքի մարզպետի 2010թ. դեկտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններում պետական կառավարման մարմնի լիազոր ներկայացուցիչներ նշանակելու մասին>> N 275-Ա որոշմամբ հաստատված հավելվածում <<ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Դոլունց Արա>> բառերը փոխարինել << ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Աշոտ Մարդյան>> բառերով, իսկ <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյան>> բառերը փոխարինել <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Թադևոս Ղազարյան>> բառերով:
2. Հավելվածի 2-րդ մասից հանել <<Արծվանիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՓԲԸ բառերը:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. փետրվարի 18
ք. Կապան